Հետազոտական աշխատանք

Դասվար

/առարկա/

<<Կապանի №2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

/Վերապատրաստող կազմակերպություն/

Թեմա՝ Որտեղից գտնենք մի կաթիլ մոտիվացիա

Կազմեց՝ Գայանե Պապյան

/ԿԱՊԱՆԻ № 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ/

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

Կապան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՄՈՏԻՎԱՑԻԱ

1.1 Ուսումնական խնդիրների պատճառները.....5

1.2 Ի՞նչ է մոտիվացիան.....9

1.3 Մոտիվացիան տարրական դպրոցում.....12

1.4 Ինչպե՞ս տարբեր միջոցներով բարձրացնել սովորողների մոտիվացիան...15

ԳԼՈՒԽ 2. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

2.1 Հետազոտության կազմակերպչական մաս.....18

2.2 Հետազոտության արդյունքների ամփոփում.....22

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....25

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....27

Ներածություն

Ցանկացած նպատակին հասնելու ամենամեծ մարտահրավերներից մեկը՝ լինի դա աշխատասիրությունը, համբերատարությունը, սովորություն ձեռք բերելը, այդ նպատակին հասնելու մոտիվացիա գտնելն է:

Երբեմն այնպես է ստացվում, որ ցանկությունը անհետանում է: Կան մի քանի քայլեր, որոնցից առաջինը հասկանալն է, թե որն է ձեր մոտիվացիայի անհետանալու պատճառը:

Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում փորձ է կատարվել վեր հանել և ուսումնասիրել այն խնդիրները, որոնք այս կամ այն առումով ազդեցություն են գործում դպրոցում սովորող աշակերտների ուսումնական մոտիվացիայի վրա, խթանում են այն կամ, ընդհակառակը, խոչընդոտում են դրա դրսևորումներին և զարգացմանը:

Թեմայի արդիականությունը: Սովորողների ուսումնական մոտիվացիայի խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դեռևս հնուց: Թեման արդիական է և հետազոտական շարունակական աշխատանք է պահանջում: Սովորողի մոտիվացիան այն է, ինչը մղում է նրան շարժվել այս կամ այն ուղղությամբ: Հաճախ ինչ-որ բան անելու համար սովորողներին պակասում է մի կաթիլ մոտիվացիա: Երբեմն սովորողները հայտնում են իրենց ցանկությունը, ասում են, որ ուզում են ավելի լավ սովորել, ունենալ բարձր առաջադիմություն, սակայն ոչ մի քայլ չեն անում դրան հասնելու համար:

Ինչպես նշել է խոսնակ Լես Բրաուն « Ինչ-որ բան ցանկանալը բավական չէ: Դու պետք է ձգտես դրան: Քո մոտիվացիան պետք է այնքան հզոր լինի, որ կարողնաս հաղթահարել այն խոչընդոտները, որոնք անխուսափելիորեն կհայտնվեն ճանապարհիդ »

Մոտիվացիայի կայուն մակարդակի առաջացումը նպաստում է երեխային այնպիսի տեսակի կրթական գործունեության մեջ ընդգրկելու հնարավորությանը, որտեղ նա

կարող է հասնել հաջողության և միևնույն ժամանակ,որտեղ կա դժվարություններ և խոչընդոտներ հաղթահարելու զգացում:

Թեմայի արդիականությունը կապված է նոր կրթական համակարգին հարմարվելու անհրաժեշտության հետ:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել մոտիվացիա թեման, հասկանալ, թե այն ինչպես է անդրադառնում սովորողների կրթության գործունեության վրա, հասկանալ՝ ինչու է նրանց պակասում մի կաթիլ մոտիվացիա :

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ մոտիվացիան բարձրացնում է ուսման մակարդակը և երբեմն հաջողության հասնելու համար պակասում է մի կաթիլ մոտիվացիա:

Հետազոտության խնդիրներն են.

- ուսումնասիրել մոտիվացիան,
- պարզել մոտիվացիաի դերը երեխաների ուսումնական գործունեության վրա,
- բացահայտել մոտիվացնող մեթոդներ և հնարներ:

Հետազոտության մեթոդներն են՝ գիտամանկավարժական գրականության և սկզբնաղբյուրների ուսումնասիրություն, վերլուծություն, հարցումներ, համեմատություն :

Հետազոտության ընտրանքը՝ Հետազոտությունն անց է կացվել Կապանի թիվ 13 հիմնական դպրոցի Iա դասարանում: Հետազոտությանը մասնակցել է 21 աշակերտ:

Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից , օգտագործած գրականության ցանկից : Ծավալը - մեքենագիր էջ է:

1.1 Ուսումնական խնդիրների պատճառները

Ուսումնական խնդիրների պատճառները կարող են լինել՝



Ֆիզիոլոգիական պատճառները երեխայի առողջության տարբեր առանձնահատկություններն են՝ երեխայի տարած հիվանդությունները, վիրահատությունները, երեխայի շարժողական ակտիվության մակարդակը, երեխայի նյարդային համակարգի տիպը և դրա առանձնահատկությունները, երեխայի դիմադրողական մակարդակը:

Սոցիալական պատճառները կարող են լինել ընտանիքում երեխայի փոխհարաբերությունները, անբարենպաստ դաստիարակության մեթոդները, ծնողների ոչ պատվաբեր վարքը և վերաբերմունքը երեխայի նկատմամբ, ընտանեկան լուրջ կոնֆլիկտները, ինչպես նաև երեխայի փոխահարբերությունները իր հասակացիների հետ:

Հոգեբանական պատճառները երեխայի ինտելեկտուալ առանձնահատկություններն ու կարողություններն են՝ նրա հիշողության, մտածողության, ուշադրության առանձնահատկությունները:

Շատ կարևոր է դասի ընթացքում սովորողների հոգեբանական բարենպաստ մթնոլորտի ստեղծումը: Դա ուսուցչի ամենակարևոր և ամենաբարդ խնդիրներից մեկն է: Այդպիսի միջավայրը ապահովում է անձի զարգացման համար անհրաժեշտ պայմանները, ինչի շնորհիվ երեխան կարող է ի հայտ բերել իր շնորհները, փոխհարաբերվել շրջապատում, ինքնադրսևորվել, կամ դրա բացակայության դեպքում դառնալ պասիվ, ներամփոփ:

Ցավոք, այսօր կրթական գործընթացում առկա են այդպիսի վատ երևույթներ, ինչպիսիք են՝ գիտելիքի նկատմամբ հետաքրքրության և ճանաչողական ակտիվության անկումը, դասերի ընթացքում ծագող խնդրահարույց իրավիճակները և այլն: Այս ամենի հետևանքով սովորողն իրեն ապահով ու հարմարավետ չի զգում: Մինչդեռ դպրոցի հիմնական խնդիրներից մեկը սովորողների հոգեբանական բարենպաստ պայմանների ստեղծումն է:

Հոգեբանական հարմարավետությունն անհրաժեշտ է ոչ միայն երեխայի զարգացման, այլև գիտելիքների արդյունավետ յուրացման համար: Չի կարելի թույլ տալ, որ երեխաները բարդույթավորվեն: Դասարանում չպետք է լինեն «լավ» և «վատ», «խելոք» ու «հիմար» երեխաներ: Յուրաքանչյուր սովորող պետք է զգա ուսուցչի վստահությունն իր ուժերի նկատմամբ: Հաջողության իրավիճակը երեխայի մեջ ձևավորում է հավատ սեփական ուժերի նկատմամբ, սովորեցնում հաղթահարել դժվարությունները և նպաստում երեխայի կողմից իր իսկ առաջընթացի գիտակցմանը:

Արդյունավետ հոգեբանական մթնոլորտի ստեղծման համար ուսուցիչներին խորհուրդ է տրվում իրականացնել հետևյալ գործառույթները.

- ***Նպաստել*** սովորողների հաղորդակցման կարողությունների զարգացմանը: Այսինքն՝ ուսուցիչը պետք է հարմարավետ պայմաններ ստեղծի դասի ընթացքում, դասարանում, դպրոցում, որպեսզի երեխան <<բաց>> լինի հաղորդակցման համար: Հետազոտությունները ցույց են տվել, որ ուսուցչի դիրքը, նրա վարքագիծը լրջորեն ազդում են դասարանի մթնոլորտի և ուսման

նկատմամբ սովորողների վերաբերմունքի վրա և մոտիվացնում են սովորողներին ավելի լավ սովորել։

Այս իմաստով հատուկ նշանակություն են ստանում Մակարենկոյի խոսքերը, որոնք ասել է ուսուցիչներին.



- Սովորողի հետ հաղորդակցում իրականացնել «ես»-ի տեսանկյունից։ Հոգեբանական հարամարավետ մթնոլորտի ստեղծման համար էական նշանակություն ունի տվյալ իրավիճակում սովորողի նկատմամբ ուսուցչի վերաբերմունքի ճիշտ դրսևորման կարողությունը։

- ***Ապրումակցել սովորողին*** /Ցուցադրել սեփական զգացմունքները, դրսևորել անկեղծ հետաքրքրություն սովորողի արտահայտած մտքերի նկատմամբ/

- ***Արժևորել սովորողին*** /Մեծարանքով վերաբերվել, օգնություն խնդրել, լինել լավատես։/

Ուսումնական դժվարությունները կարող են արտահայտվել երկու ձևով կամ երկու ոլորտում.

- Առաջինը հենց բուն ուսումնական առանձնահատկությունների խնդիրներն են: Այսինքն՝ երեխան ձախողում է կոնկրետ առարկայի շրջանակներում, չի

կարողանում ընկալել, յուրացնել, դժվարանում է կատարել հանձնարարությունները, հասկանալ, բացատրել իր մտքերը:

- Երկրորդ խնդիրը անձնային որակների դաշտից է: Այսինքն՝ երեխայի մոտ կարող է դրսևորվել ինքնուրույնության պակաս, նախաձեռնողականության պակաս, հրահանգներով աշխատելու կարողության պակաս կամ ենթարկվելու դժվարություններ:

Ուսումնական մոտիվացիան անձնային ոլորտի խնդիր է, և եթե, օրինակ, երեխան ունի բարձր ընդունակություններ, բայց չունի ուսումնական մոտիվացիա, սա ևս կարող է պատճառ հանդիսանալ, որպեսզի երեխան ունենա ուսումնական դժվարություններ:

Ինչու՞ է կարևոր այս խնդիրը ուշադրության կենտրոնում պահել և լուծումներ փնտրել.

Մենք լավ գիտենք, որ դպրոցահասակ երեխաները՝ հատկապես տարրական դպրոցի երեխաները, իրենց ամբողջ կյանքն ու ինքնադրսևորման միջավայրը համարում են դպրոցը: Եվ եթե այս գործընթացում, այս միջավայրում որևէ բան խանգարում է նրանց ինքնադրսևորման գործընթացին կամ ինքնադրսևորվման գործընթացը հագեցած է անհաջողություններով, քննադատությամբ, մեղադրանքներով, վիրավորանքներով, ապա սա ուղղակիորեն ազդում է երեխայի ինքնագնահատականի և հետագա կյանքի ձեռքբերումների վրա:

Աշխատե՛ք ամեն սովորողի մեջ տեսնել յուրօրինակ անհատականություն: Բոլոր մանուկները տաղանդավոր են: Յուրաքանչյուր սովորողի համար ստեղծեք հաջողության իրավիճակ. Սովորելը հետաքրքիր է:

1.2 Ի՞նչ է մոտիվացիան

« Մոտիվացիա » տերմինը առօրյա կյանքում հայտնվել է համեմատաբար վերջերս։ Սկզբում դրան դիմեցին ձեռնարկությունների անձնակազմի հետ աշխատանքի մասնագետները, այս տերմինը աննկատելիորեն արտահոսեց ժամանակակից մանկավարժության մեջ: Մոտիվացիա (լատիներեն movere-ից) - գործողության իմպուլս, հոգեֆիզիոլոգիական գործընթաց, որը վերահսկում է մարդու վարքը՝ սահմանելով դրա ուղղությունը:

- Մոտիվացիա՝ **շարժառիթ**, ներքին և արտաքին գործոններ, որոնք դրդում են մարդկանց իրականացնել գործողություններ, որպեսզի հասնեն նպատակին։
- Մոտիվացիան բանալին է, բայց ամենևին էլ հեշտ չէ այն գտնել ։
- Մոտիվացիան այն է, ինչը մեզ մղում է դեպի նպատակը, խթանում է առաջ գնալուն, երբ ամեն ինչ սխալ է ընթանում։
- Մոտիվացիայի համակարգն անմիջականորեն կապված է յուրաքանչյուր մարդու հոգեբանական բնութագրերի հետ։

Ամենից հաճախ գիտական գրականության մեջ մոտիվացիան համարվում է հոգեբանական պատճառների համադրություն, որով բացատրվում է մարդու վարքագիծը, դրա ծագումը, ուղղվածությունը և գործունեությունը։ Սակայն գոյություն ունեն մոտիվացիայի սահմանման մի շարք տարբերակներ.

Մոտիվացիան լինում է՝

Ներքին, երբ աշակերտը սովորում է հետաքրքրությունից դրդված, երբ դասը հաճույք է պատճառում նրան, երբ ավելի շատ գիտելիք է ցանկանում ստանալ:

Արտաքին, երբ ներգործում են արատաքին գործոններ՝ ծնողներին գոհացանել, բարձր գնահատական ստանալ, ընդունվել ուսհասատատություն և այլն:



Ա.Մասլոուն դասակարգել է մարդկային հիմնական պահանջմունքները և հիերարխիայի տեսքով, որը հաճախ անվանում են Մասլոուի պահանջմունքների բուրգ:



Ուսուցման մոտիվացիան գործընթաց է, որն ուղղորդում և աջակցում է ուսումնական գործունեության իրականացմանն ուղղված ջանքերին: Սա բարդ համակարգ է, որը բաղկացած է դրդապատճառներից, նպատակներից, ձախողման արձագանքներից և նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի կարիքներից: Ուսումնական գործընթացի հաջողությունը, աշակերտների ստացած գիտելիքների մակարդակը, սովորելու կամ նույնիսկ ամբողջ կյանքը երաժշտի մասնագիտությանը նվիրելու ցանկությունը կախված են ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների մոտիվացիայից:

Մոտիվացիան ամենամեծ ազդեցությունն ունի կրթական գործընթացի ցուցանիշների արդյունավետության վրա և որոշում է կրթական գործունեության հաջողությունը: Ուսուցման մոտիվների ձևավորման բացակայությունը անխուսափելիորեն հանգեցնում է ակադեմիական կատարողականի վատթարացման և անհատի դեգրադացիայի: Ուստի ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը ուսուցման մոտիվացիայի ձևավորումն ու զարգացումն է: Ուսուցիչը պետք է իմանա, հասկանա և հաշվի առնի դպրոցականների հոգեհուզական, ինչպես նաև տարիքային առանձնահատկությունները՝ որոշակի երեխայի վարքագծի պատճառները որոշելու համար, ինչը կօգնի ոչ միայն հասկանալ, այլև ազդել գործողությունների վրա:

Ուսուցչի գործն ավելի արդյունավետ կլինի, եթե կարողանա արտաքին մոտիվացիա ունեցող աշակերտների մոտ արթնացնել ներքին մոտիվացիա։ Դա, իհարկե, բարդ գործընթաց է, բայց կարելի է հասնել դրան։

Վ.Ա.Սուխոմլինսկին ասել է. «*Միայն այն ուսուցիչն է իր գործում հմուտ, ով ավելի լավ գիտի, թե ինչ է պետք իմանան իր աշակերտները և ինչ ճանապարհով է պետք հասնել այդ գիտելիքներին*»։ Նա նշում է, որ գիտելիքի իմաստավորման և մոտիվացիայի խթանման հաջողությունը, որքան էլ բխում են տարբեր սկզբունքներից, այդուհանդերձ դրանց փոխկապակցվածությունը իրագործվում է հարցադրումների մեթոդի, զրույցի խաղային տեխնոլոգիաների կիրառումից։

1.3 Մոտիվացիան տարրական դպրոցում

Հաջողության զգացումը, հաջողության ձգտելու ցանկությունը և հաջողության հասնելու մոտիվացիան ձևավորվում է հենց դպրոցական տարիքում։ Երեխայի կյանքի զարգացման ընթացքում ունենք շրջաններ, երբ կոնկրետ որակներ են ձևավորվում և տարրական դպրոցի տարիքը հենց հաջողության հասնելու մոտիվացիայի ձևավորման տարիքն է։ Դրանից հետո այս մոտիվացիան և նպատակասլացությունը ձևավորելը շատ դժվար կլինի։

Այսօր տարրական կրթությունը ձևավորում է երեխաների կրթական գործունեությունը, պահպանում է կրթական համակարգը և ճանաչողական դրդապատճառները, իրականացնում է կրթական նպատակները, վերահսկում և գնահատում է ուսումնական նպատակներն ու նրանց արդյունքները։

Մեր օրերում դպրոցում նկատվում է միտում, որ տարրական դասարանների աշակերտները շատ ավելի մոտիվացված են նոր գիտելիքներ ձեռք բերելու համար, քան միջին և առավել ևս ավագ դպրոցի աշակերտները։ Կրտսեր աշակերտներն ավելի շատ ներքին մոտիվացիա ունեն, այսինքն՝ իրենք են ցանկանում սովորել աշխարհի և ամեն նորի մասին։

Երբեմն թույլ կարողություններով, բայց մոտիվացիայի բարձր մակարդակ ունեցող սովորողը կարող է ավելի բարձր ակադեմիական արդյունքների հասնել, քանի որ նա ձգտում է դրան և ավելի շատ ժամանակ և ուշադրություն է հատկացնում սովորելուն: Միևնույն ժամանակ, սովորողը, ով բավականաչափ մոտիվացված չէ, չնայած իր կարողություններին՝ կարող է ակադեմիական հաջողությունների չհասնել:

Սովորելու մոտիվացիան կարող է լինել նաև սովորողի մտավոր բարեկեցության մակարդակի լավ ցուցանիշ, ինչպես նաև նրա զարգացման մակարդակի ցուցիչ: Հաճախ աշակերտների սովորելու դրդապատճառները կարող են շատ հասարակ մի բան լինել՝ ստանալ ցանկալի նվերներ իրենց ծնողներից, գովասանք ծնողներից և ուսուցիչներից, գերազանց աշակերտ դառնալու ցանկություն, աչքի ընկնել իրենց հասակակիցների մեջ և այլն:

Երբեմն անհրաժեշտ է լինում, որ երեխաները դասի ընթացքում ավելի ուշադիր լինեն: Դասի ընթացքում երեխաների ուշադրությունը պահելու համար անհրաժեշտ է ակտիվ և հետաքրքիր դասաժամերի կազմակերպումը: Սակայն սովորողների մոտ հաճախ նկատվում է, որ սովորում են միայն որոշ առարկաներ: Այդ պատճառով, ենթադրվում է, որ ուսուցչը պետք է ապահովվի աշակերտի մշտական մոտիվացիոն գործողությունները դասի բոլոր փուլերում:

Մոտիվացիայի բովանդակությունը կարող է տարբեր լինել.

<u>Առաջնային մոտիվացիայի փուլ</u>.

- աշակերտը դասի սկզբում պետք է հասկանա, թե ինչ նոր և օգտակար բան է սովորելու,
- որտեղ կարող է կիրառել ստացած գիտելիքները:

Ուսուցիչը կարող է օգտագործել աշակերտների խրախուսման մի քանի տեսակներ ուսումնական գործունեությանը.

- ակտիվացնել նախորդ դասերի ընթացքում առաջացած դրդապատճառները,
- ակտիվացնել իրենց արդյունքներից դժգոհության դրդապատճառները,

- ամրապնդել նախորդ գործունեության վրա կենտրոնանալու շարժառիթները,
- ամրապնդել զարմանքի, հետաքրքրության դրդապատճառները։

Դասի ավարտի փուլ.

Այս փուլում կարևոր է աշակերտի դուրս գալը գործունեությունից դրական սեփական փորձով և ապագայում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունքի ի հայտ գալը, այսինքն՝ ապագայի համար դրական մոտիվացիա։

Ինչպե՞ս ստեղծել մոտիվացիայի բարձր մակարդակ։

Մենք գտնում ենք, որ դասավանդողը ինքը ևս պետք է մոտիվացված լինի, որպեսզի ստեղծվի կապը սովորեցնողի և սովորողի միջև, և գործընթացն ունենա արդյունք։ Ինչպե՞ս ստեղծել այդ կապը։

Ուսուցիչը պետք է ունենա՝

- էնտուզիազմ և հստակ նպատակներ՝ սովորողների հետ կապված,
- քաջալերի սովորողներին,
- սովորողի մոտ զգացում առաջացնի, որ իսկապես հավատում է նրա առաջադիմությանը և հաջողություններին,
- ստեղծի աջակցող մթնոլորտ՝ իր և սովորողների միջև,
- լինի համբերատար սովորողի նկատմամբ։

Եվ ինչպես ասում էր Սթիվ Ջոբսը՝ <<Մեծ աշխատանք անելու միակ ճանապարհը սիրելն է այն, ինչ դու անում ես>>։

1.4 Ինչպե՞ս տարբեր միջոցներով բարձրացնել սովորողների մոտիվացիան

Սովորողների ուսումնական մոտիվացիան բարձրացնելու համար նպատակահարմար է խաղային տեխնոլոգիաների կիրառությունը: Չէ որ երեխաները կրտսեր դպրոցական տարիքում առաջնային աճում, զարգանում և ուսուցանվում են հենց խաղերի միջոցավ: Այդ պատճառով էլ խաղային տեխնիկաների և հնարների կիրառությունը դասապրոցեսում թույլ է տալիս ուսումնական գործընթացը դարձնել արդյունավետ, հետաքրքիր աշակերտների համար, հետևաբար, բարձրացնել աշակերտների մոտիվացվածությունը դասին մասնակցելու, մատուցվող նյութն ընկալելու:

Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները զարգանում են այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանների հասնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, խելքը և երևակայությունը: Խաղային գործունեությունը հետաքրքիր է երեխաներին և կարող է առաջացնել նորի ճանաչման դրական շարժառիթ:

Դպրոցում սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ նրանց բոլոր ժամանակների մոտիվացնող ուժը եղել է և մնում է խաղը:

Սովորողները դպրոցական տնային աշխատանքները սկսում են անել դժկամությամբ, որովհետև այն սահմանափակում է իրենց խաղալու ժամանակը: Հետևաբար կարող ենք եզրակացնել,որ աշակերտի համար ամենաարդյունավետը կլինի խաղալով սովորելու պրոցեսը , այնպես որ նա գուցե այնքան տարվի խաղով,որ չնկատի անգամ այդ պրոցեսում իր սովորելու ընթացքը:

Այսօրվա մոտիվացիոն գործոնները խիստ տարբերվում են մյուս ժամանակաշրջանների մոտիվացնող գործոններից, քանի որ 21-րդ դարը տեխնոլոգիաների դարաշրջան է համարվում: Ինչքան էլ հասարակության տարբեր

խավեր ցանություն են հայտնում ժամանակակից տեխնոլոգիաների պետքական լինելը բացառել, այն համարել ինչ-որ չափով նույնիսկ չարիք, սակայն ժամանակակից աշխարհում վերջիններս լայն թափով մտել են և շարունակում են մտնել մեր կյանք և աշխարհը դարձնել յուրաքանչյուրիս համար հասկանալի, մատչելի ,հասանելի։

Առանց դրանց ժամանակակից մարդն այլևս չի պատկերացնում իրեն, իր գործունեությունը , աշխատանքը։ Ժամանակակից տեխնոլոգիական միջոցների առկայության ազդեցությունը չշրջանցեց նաև մանկավարժության ոլորտը ՝ պահանջ ներկայացնելով նորացնել ուսուցման կազմակերպման ձևերը ։

Ինչու՞ է նկատվում ցածր առաջադիմություն սովորողների մոտ և ժամանակակից տեխնոլոգիական միջոցները , մասնավորապես համակարգիչը և համակարգչային խաղերը, ինչպե՞ս կարող են մոտիվացնել սովորողին։

Հոգեբան-մասնագետների և ծնողների կողմից ցուցաբերած մոտեցումները շատ տարբեր են , երբեմն նաև հակասական , համակարգչային խաղերի նկատմամբ։ Որոշ հոգեբաններ գտնում են ,որ համակարգչային խաղի ընթացքում երեխայի մոտ ի հայտ են գալիս մի շարք դրական հատկանիշներ, ինչպիսիք են ինքնագնահատականի բարձրացումը,կոորդինացիայի բարելավում, մարզվում է երեխայի միտքը, իսկ հոգեբանների մեկ այլ խումբ կարծում է, որ համակարգչային խաղով տարված երեխաները չշփվող են և նաև դրսևորում են ագրեսիվ վարք։

Համակարգչային խաղը պետք է միտված լինի միայն և միայն սովորողի ուսումնառությունը հեշտացնելուն, հետաքրքրացնելուն և ուսումնառության նկատմամբ սովորողի մոտիվացիան բարձրացնելուն։ Համակարգչային խաղ խաղալով սովորողը առաջին հերթին իր մոտ զարգացնում է 21-րդ դարի համար մի շատ կարևոր հմտություն՝ թվային հմտություն, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից որև մասնագիտություն։

Այս գործընթացը արդյունավետ է ոչ միայն սովորողի համար, այլ նաև հեշտացնում է ուսուցչի գործը , քանի որ բազմաթիվ են օնլայն համակարգչային խաղերը համացանցում, բացի այդ ուսուցիչը ինքն էլ կարող է տարբեր ՏՀՏ գործիքների

միջոցով կազմել իր դասին հարմար խաղ և տվյալ օրվա դասի նյութի ամրապնդումը՝ գործնական աշխատանքը կամ ինքնուրույն աշխատանքը իրականացնել նման ձևով:

Որպես ինտերակտիվ առաջադրանք՝ խաղ, կազմելու անվճար գործիք ուսուցչի համար՝ կարող են հանդես գալ՝

Այս ամենը մասամբ հեշտացնում, իսկ մասամբ էլ դժվարացնում է ուսուցչի գործը: Դժվարացումը կայանում է նրանում,որ ամեն մի նոր թեմայի համար մի հետաքրքիր համակարգչային խաղ պետք է մտածել, սարքել կամ փնտրել և գտնել պատրաստի խաղ: Ինչքան էլ հետաքրքիր լինեն նման ձևով դասերի անցկացումը, կարծում եմ ,եթե այն դարձնել ամենօրյա դասի ձև, ապա կկորցնի իր յուրահատկությունը: Այս դեպքում առաջարկում են համակարգչային խաղերով դասի անց կացումը լինի պարբերաբար, բայց ոչ ամենօրյա :

ԳԼՈՒԽ 2. Հետազոտական մաս

2.1 Հետազոտության կազմակերպչական մաս

Հետազոտության նպատակն է պարզել, թե որքանով է բարձրացնում ուսումնական մոտիվացիայի մակարդակը

- խաղային տեխնոլոգիաների կիրառությունը,
- ՏՀՏ գործիքների կիրառությունը,
- Ինչու է պակասում մի կաթիլ մոտիվացիա։

Հետազոտության նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

- Պարզել սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը
- Բացահայտել ծնողների՝ ժամանակակից տեղեկատվականհաղորդակցական գործիքներին տիրապետման մակարդակը։
- Վերլուծել ՏՀՏ գործիքներով և խաղային տեխնոլոգիաներով կիրառված դասի առավելություններն ու թերությունները։
- Կատարել համեմատում առանց ՏՀՏ գործիքների, խաղային տեխնոլոհիաների կիրառված դասի հետ։

Հետազոտությունն իրականացվել է ԿԱՊԱՆԻ № 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ-ի Iա դասարանում։ Հետազոտությանը մասնակցել է 21 սովորող՝ 9 աղջիկ և 11 տղա։

Հետազոտությունն իրականացրել ենք հետևյալ մեթոդներով.



- *Իրականացրել ենք* հարցում: Սովորողները պատասխանել են, իսկ ծնողները լրացրել են Google Forms-ով կազմած հարցաշարը: Հարցմանն արդյունքում բացահայտել ենք ծնողների՝ ժամանակակից տեղեկատվական հաղորդակցական գործիքներին տիրապետման մակարդակը և պարզել ենք սովորողների ուսումնական մոտիվացիայի մակարդակը:

  Հարցում - https://forms.gle/STZxybXS5BrWk6F47

- Իրականացրել ենք նաև հարցում ԿԱՊԱՆԻ № 13 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ-ի տարրական դպրոցի այլ դասարաններում: Կատարել ենք համեմատում:

- Իրականացրել ենք նախապես պլանավորված ՏՀՏ գործիքներով և խաղային տեխնոլոգիաներով դաս:

  / Վարած դասի պլանը՝ ստորև/

Դասի պլան

Ուսուցիչ՝ Գ. Պապյան | *Առարկա՝ մայրենի Դասարան՝ 1-ին* | *Ամսաթիվ՝ 13.09.2023թ.*

Դասի թեման	Աջ, ձախ:
Տևողությունը	45 րոպե
Դասի տեսակը	Նոր նյութի յուրացման դաս
Նպատակը	❖ Պատմության հասկացության ամրակայում, ❖ Հաղորդակցական և համագործակցային

	կարողությունների ամրակայում, ❖ Բառապաշարի հարստացում, ❖ Բանավոր խոսքի զարգացում, ❖ Առարկաների հատկությունների մասին գիտելիքների համակարգում, ❖ գաղափար ունենա « աջ» և « ձախ» հասկացության մասին, ❖ Ինքնակազմակերպման հմտությունների ձևավորում:
Վերջնարդյունքը	❖ Մտքերն արտահայտի պարզ, հասկանալի՝ հավատարիմ մնալով թեմային, ❖ համագործակցի ընկերների հետ՝ պահպանելով բարեվարքության և խմբային աշխատանքի սահմանված կանոնները, ❖ տարբերի աջ և ձախ կողմերը, ❖ պատկերացնի առարկաների դասավորությունը հարթության վրա և տարածության մեջ, ❖ Կռահի և շարունակի պարզ օրինաչափություններ , ❖ նկատի սլաքների ուղղվածությունը, ճիշտ ընտրի պահանջված գույները:
Միջառարկայական կապ	❖ Մաթեմատիկա ❖ Կերպարվեստ ❖ Ֆիզկուլտուրա
Օգտագործվող նյութեր	Համակարգիչ, տեսացրիչ, դասագիրք, քարտեր՝ աջ և ձախ սլաքներով:

Ընթացք	*Խթանման փուլ* ✓ Թեմատիկ նկարից բառերի առանձնացում, ✓ Թեմատիկ նկարից նախադասությունների առանձնացում, ✓ Թեմատիկ նկարի շուրջ պատմության ներկայացում: *Իմաստավորման փուլ* ✓ Տեսադասերի դիտում / https://sovorir.am/site/lesson/id/131, https://sovorir.am/site/lesson/id/131/ ✓ Խմբային աշխատանք Դասարանը բաժանվեց 5 խմբի: Յուրաքանչյուր խմբի տրվում է աջ և ձախ սլաքների չգունավորված քարտեր: Սովորողները պետք է առանձնացնեն աջ և ձախ քարտերը, այնուհետև գունավորեն համապատասխան գույներով: Ֆիզկուլտ – դադար ✓ Մատիկների վարժանք / Իմ ձեռքերն են՝ աջ ու ձախ/: ✓ Խաղ՝ Ես ասեմ աջ, դու տեղադրիր ձախ *Կշռադատմանման փուլ* **Խաղ՝** https://learningapps.org/display?v=pd5tcagy523
Գնահատում	Ձևավորող գնահատում /բանավոր հարցում/

Անդրադարձ	✓ Սովորողները հասցրեցին առանձնացնել աջ և ձախ սլաքները, ✓ հասկացան՝ որն է աջ, որը՝ ձախ, ✓ գիտակցեցին, որ շատ կարևոր է միմյանց լսելը:

- Վերլուծել ենք մեր վարած ՏՀՏ գործիքներով և խաղային տեխնոլոգիաներով դասը առանց վարած ՏՀՏ գործիքների և խաղային տեխնոլոգիաներիով դասի հետ:
- Կատարել ենք համեմատում, որպեսզի բացահայտենք ՏՀՏ գործիքներով և խաղային տեխնոլոգիաներով դասերի առավելություններն ու թերությունները:

2.2 Հետազոտության արդյունքների ամփոփում

Առաջին հարցման արդյունքները ցույց տվեցին, որ՝

- ✓ ծնողների 100 %-ը լավ տիրապետում է տեղեկատվական հաղորդակցական գործիքներին /հեռախոս, համակարգիչ/,
- ✓ հարցմանը մասնակցող սովորողների 100 %-ը սիրում է դպրոցը, /հավելված 1/
- ✓ 100 %-ը հաճույքով է հաճախում և նախընտրում է դպրոց գալ, այլ ոչ թե տանը մնալ, /հավելված 2/
- ✓ 100 %-ը դպրոցում ամենից շատ հավանել է ուսուցչուհուն և դասասենյակը,
- ✓ 12,5 %-ը կուրախանա, երբ դասերից մի քանիսը չպարապեն, /հավելված 3/
- ✓ 18,8 %-ը ուզում է, որ տնային աշխատանք չտան, / հավելված 4/
- ✓ 63,5 %-ը ցանկանում է, որ դասամիջոցները ավելի հաճախակի լինեն, /հավելված 5/
- ✓ 25 %-ը տանը դպրոցի մասին չի պատմում, իսկ 82,3 %-ը ուսուցչուհու մասին է պատմում, /հավելված 6/

✓ 13,6 %-ը դասարանում ընկերներ չունի:





Հավելված 1 **Հավելված 2**





Հավելված 3 **Հավելված 4**





Հավելված 5 **Հավելված 6**

Այսպիով, սովորողներիի գերակշիռ մասը դրական է վերաբերվում դպրոցին, հասկանում է ուսումնական նյութը, ուշադիր է առաջադրանքներ կատարելիս, ընկերություն է անում դասընկերների հետ: Սովորողների շատ քիչ մասը ճիշտ է, դրական է վերաբերում դպրոցին, սակայն նրանց դրավում է արտադասարանական զբաղմունքները: Նրան շատ լավ են զգում դպրոցում, բայց ավելի հաճախ գնում են

դպրոց ընկերների և ուսուցչի հետ շփվելու համար: Նրանց մոտ ճանաչողական մոտիվներն ավելի լավ են զարգացած, բայց ուսումը նրանց համար առաջին պլանում չէ:

Երկրորդ հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ ՏՀՏ գործիքներով, խաղային տեխնոլոգիաներով դասերից հետո սովորողները՝

- ուզում են, որ դասերը հաճախակի կազմակերպեն համակարգչային դասասենյակում,
- անհամբերությամբ են սպասում հաջորդ դասին,
- մեծ ոգևորվածությամբ են ծնողներին պատմում անցած դասերի մասին,
- տուն են գնում վառ տպավորություններով,
- նկատվում է ուսման որակի բարձրացում :

Փորձարկումների, դիտարկումների արդյունքում բացահայտեցինք ՏՀՏ գործիքներով և խաղային տեխնոլոգիաներով կիրառված դասի առավելություններն ու թերացումները:

Առավելություններ.

- ✓ պատկերավոր, հետաքրքիր դասեր,
- ✓ նյութը ներկայացվում է զանազան ձևերով,
- ✓ աշակերտակենտրոն է ,
- ✓ սովորողները արագ ընդգրկվում են ուսումնական գործընթացում,
- ✓ հեշտ են յուրացնում ուսումնական նյութի դժվարությունները,
- ✓ սովորողների մոտ զարգանում է կառուցողական մտածողությունը,

- ✓ նկատվում է սովորողների հետաքրքրվածություն, ոգևորվածություն:

Թերություններ.

Ուսուցչից պահանջում է՝

- ➢ լրացուցիչ նախապատրաստություն,
- ✓ հավելյալ աշխատանք,
- ✓ ծանրաբեռնվածություն:

2.3 Եզրակացություն

Ենթադրվում է, որ մարդկանց մեծամասնությունը մտապահում է լսածի 5%-ը և տեսածի 20%-ը: Ասում են, որ երբ միաժամանակ լսում և տեսնում են որևէ տեղեկատվություն, ապա 40-50%-ով ավելի լավ են մտապահում:

Այսպես՝ ակտիվացնելով տեսալսողական զգայարանները միաժամանակ՝ մի քանի անգամ հեշտանում է ուսումնական նյութի ընկալումը: Ներկայումս բազմաթիվ փաստեր հաստատում են մեկ վերլուծիչի (զգայարանի) դրդման ազդեցությունը մյուսի դրդունակության վրա:

ՏՀՏ գործիքները մեզ հնարավորություն են տալիս ուսումնական նյութը ներկայացնել զանազան ձևերով, և հենց դրանով է ուսումնական պրոցեսն ավելի արդյունավետ դառնում: Նմանատիպ դասերի ընթացքում ստեղծվում է իրական շփման իրավիճակ, սովորողները ուսումնական նյութի հանդեպ մեծ հետաքրքրվածություն են ցուցաբերում, քանի որ ուսուցումն առավել հետաքրքիր է սովորողների համար, երբ նրանք չգիտեն՝ ինչ սպասել:

Քանի որ մարդու մոտիվացիայի իրական աղբյուրն իր մեջ է, անհրաժեշտ է, որ նա ինքը ցանկանա ինչ-որ բան անել: Հետևաբար, ուսուցման հիմնական շարժառիթը ներքին շարժիչ ուժն է: Դիդակտիկ նյութերը, տեսադասերը, ուսուցողական խաղերն, մուլտֆիլմերը նպաստում են աշակերտների հետաքրքրվածության և մոտիվացիայի բարձրացմանը և արթնացնում են այդ ներքին շարժիչ ուժը :

Համեմատելով տարբեր մեթոդներով դասեր իրականացնելու եղանակները, եկանք այն եզրակացության, որ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաների գործածությունը, խաղային տեխնոլոգիաները այն մի կաթիլ մոտիվացիան են, որը երբեմն պակասում է ուսումնական գործընթացում: Դրանք մոտիվացիայի բարձրացման արդյունավետ եղանակ են, քանի որ նպաստում են սովորողների ներգրավմանը դասապրոցեսին, բարձրացնում սովորողների հետաքրքրությունը առարկայի հանդեպ և նկատվում է մոտիվացիայի դրական աճ:

Ուսումնական գործընթացում ուսուցիչը դառնում է ուղեկից, բայց ճանապարհի ամբողջ <<ծախսն>> իր վրա չի վերցնում: Սովորողների մոտիվացիան մեծանում է և պայմաններ են ստեղծվում ապագայում նրանց հաջող ինքնահիրացման համար:

Ցավոք, պետք է խոստովանենք, որ ոչ բոլոր ուսուցիչները կարող են աշխատել ՏՀՏ գործիքներով, սարքավորումներով:

Հին ժամանակներում մարդիկ սովորում էին, որպեսզի ինքնակատարելագործվեն: Հիմա սովորում են, որպեսզի ուրիշներին զարմացնեն: /Կոնֆուցիոս/

Եկե՛ք կարողանանք, զարմացնենք և ստեղծենք այդ մի կաթիլ մոտիվացիան:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բոժովիչ, Լ.Ի. Երեխայի մոտիվացիոն ոլորտի զարգացման խնդիրը
2. https://www.imdproc.am/info/usucichnerin/thtn-usumnakan-gorcyntacum
3. https://blognews.am/arm/news/560637/null
4. https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Mankavarjutyun/2008%283-4%29.pdf
5. http://ijevanlib.ysu.am/wp-content/uploads/2017/12/mankavarjutyun
6. http://psycheya.ru/lib/736.pdf